



Արգենտինացի գրող Խուլիո Կորտասարին (1914-1984) ճանաչում են ողջ աշխարհում, որպես նոր լատինաամերիկյան վեպի հիմնադիրներից մեկի, որպես նորարար-արձակագրի: Ընթերցողին ավելի քիչ է հայտնի Կորտասար-բանաստեղծը, թեև նա բանաստեղծություններ գրել է ողջ կյանքում: Այս ժողովածուում ընդգրկվել են Կորտասարի՝ մինչև 1983 թ-ը ստեղծած բանաստեղծությունները, որոնք առաջին անգամ տպագրվել են գրողի մահից հետո՝ 1984-ին: Ժողովածուն հայերեն թարգմանությամբ ներկայացվում է առաջին անգամ:

□□□□□□

Ջուր է մտածելը,
Թե ես կարող եմ քեզ տալ ամեն ինչ՝
սեր և երջանկություն,
Ճամփորդություններ, երաժշտություն, խաղալիքներ:
Օ~, այո~, իհարկե,
ես քեզ տալիս եմ ամեն ինչ,
բայց միայն ինը՝ բավական չէ քեզ,
ինչպես բավական չէ և ինձ՝
միայն քոնը:
Եվ այդպես՝ մենք երբեք չենք դառնա
ամուսնական զույգ,
քանզի հասկանում ենք,
որ միայն թվաբանության մեջ է,
որ մեկ գումարած մեկի արդյունքում՝ երկուս է:

Եվ ահա մի թերթիկ ևս,
նրա վրա գրված է՝
<<Դու միշտ էլ իմ հայելին ես եղել>>, այսինքն՝

որպեսզի ինձ տեսնեի, ես պետք է նայեի քեզ:
Եվ նորից մի պատահիկ՝
Մենք դանդաղում ենք չսիրել,
մարմինները դանդաղում են դուրս պրծնել
սավաններից և զգվանքներից,
Բայց մեզնից յուրաքանչյուրը, առավոտյան,
նայելով հայելուն,
տեսնում է ինքն իրեն միայն,
չի նայում շուրջը,
չի նկատում մերկությունը մյուսի,
և ես չեմ սիրում քեզ, սիրելի՛ս:

ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ
Ահա և բոլորը գնացին,
մնացին միայն կեղտոտ ափսեները, մոխրամանները,
և մենք՝ երկուսով,
ինչ հրաշալի է իմանալ,
որ դու
գիշերամուտին,
ինձ հետ մենակ ես մնացել,
դու չես հեռացել.
անկողինը բաց է,
և կրկին
ձգտում ենք իրար
և առավոտյան, նորից ծիծաղելով,
մենք արթնանում ենք միասին:

ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ
Դու կկառուցես հզոր մի քաղաք:
Եվ ճանապարհները հզոր այդ քաղաքի կհասնեն այլ քաղաքների,
այլ քաղաքների,
այդպես ժանտախտով հիվանդ առնետները
վարակում են այլ առնետների և մարդկանց:
Ամեն շնչավոր քո քաղաքում կփառաբանի քեզ,
դու կլինես մեծարված,
գովաբանված և մեծարված,
ինքդ կսկսես արտասանել քո անունը՝ որպես անձանոթ՝ դադարելով նկատել
տարբերությունը կուռքի և
մարդկանց միջև:
Հավանաբար երջանիկ կլինես,
Ինչպես ամեն տղամարդ կնոջ հետ,
ինչպես այդ քաղաքի ամեն բնակիչ

հավանաբար, գեղեցիկ կլինես,
ինչպես ամեն մի կուռք՝ քարե դեմքով,
ինչպես ամեն առյուծ, որ թռչում է կրակե օդակի միջով,
և կկառուցես աշտարակը,
կլինես հանդիսախաղերի արվեստի հովանավորը,
և քո անունով կկոչեն ընտանիքներում
յուրաքանչյուր յոթերորդ երեխային.
Եվ մի՞թե մանրուք չէ, որ ստվերում աճում է բորբոսը,
չէ՞ որ գործարանները իրենց ծխով երկնքում գրում են
քո անվան սկզբնատառերը:
Կավճե շրջանակը կփակվի,
և գիշերվա քարանձավներում արդեն չեն նկարվի
փրկարար պատկերները:
Այժմ և հավիտյան՝ դու կդառնաս գերագույն քուրմը,
իսկ առավոտյան՝ ինքդ քո մատուցողը:
Դու կկանգնեցնես հզոր մի քաղաք,
ինչպես մրջյուններն են կառուցում մրջնաբույնը,
և կհասնես դու մինչ Ռումինիա:
Եվ հաղթանակած զորքերի վերադարձի առիթով՝
անչափ ուրախություն կլինի բոլոր գրառումներում:
Դա չի անցնի քո բնակության սահմաններից,
բայց կեսօրից մինչև կեսգիշեր
դու կկառուցես հզոր մի քաղաք,
քաղաք-սիրտ, քաղաք -հիշողություն,
քաղաք- անփառունակություն:
Մարդու քաղաքը կդառնա մարդ- քաղաք,
և կսկսեն պաշտպանել քեզ ինչ որ մարդիկ՝
այլ մարդկանցից,
մթությունները՝ մթություններից,
շները՝ շներից,
երեխաները՝ երեխաներից,
կանայք, սակայն, նույն ձևով կքնեն
տղամարդկանց հետ,
իսկ պացիֆիստները կկոչեն խաղաղության:
Հավատում եմ, որ կմեռնես դու՝ հավատալով,
թե կառուցեցիր քաղաքը:
Հավատում եմ, որ դու կառուցեցիր քաղաքը:
Հավատում եմ քեզ և քաղաքին:
Իսկ այժմ, այո, ես հավատում եմ,
այժմ ես գիտեմ, որ դու կանգնեցրիր քաղաքը:
Ave, Cezar..

□□□□□□□□

Ո՛չ, դժվար է հավատալ, որ տասներկու տարի առաջ

Ես բոլորեցի հիսունը:
Այդ ինչպես պատահեց, որ դեռևս
տասներկու տարի առաջ
ես դարձա այնքան ծեր:

Իսկ շուտով կասեմ՝ տասներեք տարի առաջ
ես բոլորեցի հիսունը:
Ո՛չ, ո՛չ, անհնար է:
Երկինքը՝ կապույտ, ինչպես երբևէ,
Իսկ դու՝ հմայիչ, ինչպես երբևէ:
Իսկ, գուցե, ուղղակի,
Ժամացույցը ճիշտ չի աշխատում:
Լողում եմ սենյակում
ծխախոտի ծուխը և բույրը վիսկիի.
Նրանք ուզում են
ինձ հետ լինել ...բայց ոչ,
չի կարելի հավատալ, որ տասներկու տարի առաջ
ես բոլորեցի երկու անգամ քսանհինգը:
Քո ձեռքը խաղում է իմ մազերի հետ,
ես գիտեմ՝ նա փորձում է ճերմակ մազեր գտնել:
Դե ինչ, մի տասը կլինի,
բայց փորձի՛ր գտնել դրանք:
Ես նորից սկսեցի կարդալ դասականներին,
որոնց մոռացել էի վաղուց:
Պետք է շտապել,
ո՛չ, հարցը մոտալուտ մահվան մեջ չէ,
ուղղակի շուտով ես կասեմ՝
տասներեք տարի առաջ
ես բոլորեցի հիսունը...
Եվ հետո կգա տասնչորսը,
և ես վախենում եմ,
ես վախենում եմ այդ թվից,
և եթե քեզ ճիշտն ասեմ,
ես վախենում եմ թվից՝ տասնչորս:

Appel Rejete

Սա շեղբի կանխազգացումը չէ, որ կանջատի
ինձ ինձանից,
և ոչ վստահություն նրանում, որ հետո կլինի ոչ այնպես,
ինչպես մենք ենք պատկերացում:
Թող կատարվի այն ամենը,

ինչ պետք է կատարվի, և բավական է:
Սակայն, թող բոլոր մարդիկ քնեն այդ ժամին,
իսկ խոլ պատերով շրջապատված բակը
արշալույսին կգան միայն հանդիսատեսները՝
արյան ծարավ,
և նրանց ձայները կխլացնեն աղմուկը իմ արյան,
թող իսկապես չլինի ո՛չ մարդը, ո՛չ ծառը,
ո՛չ էլ՝ արևը պատուհանում,
որովհետև պատուհան չի լինի,
թող ամեն ինչ կատարվի խավարում անաչք,
թող բոլոր մարդիկ քնեն խաղաղ,
երբ նրանց մի մասնիկը անջատում են իրենցից:
Ո՛չ, ո՛չ, մահապատժի կանխազգացում չէ դա
և ոչ էլ՝ մահվան սարսափի,
որ կքայքայի նյարդերը իմ, ինչպես գոտիները, որոնցով
ես կապված կլինեմ.
կանխազգացում չէ ակնթարթի՝
հավերժություն թվացող,
թե կիջնի գիյոտինի եռանկյուն դանակը,
ոչ հյուսի, թե կարող է պատահել՝
ամեն ինչ անավարտ կմնա հետո.
ո՛չ, ո՛չ էլ ճիչը, որ ականա պատռում է բերանն իմ:
Ես մտածում եմ թմբուկների, հանրային
մահապատժի մասին,
և այն մասին, թե ինչպես կանցնեն երկու մոխրագույն
շարքերի միջով՝
իմ արյանը ծարավ, իմ անունն անիծող,
խելագար- աչքերի և եղունգ - գայլերի մասին,
և՛ մարդկանց մասին, և՛ արևի, որ չհոգնող
հանդիսատես է տարբեր տեսարանների,
և ինչ-որ մեկի՝ հերոս դառնալու հնարավորության մասին,
և ուզում եմ հավատալ, որ
ահա այս փակ պատուհանից այն կողմ
ինչ-որ մեկը աղոթում է կամ արտասվում,
և ես այդ ինչ-որ մեկի հետ ամբողջացած եմ,
զոհ եմ մյուս զոհերի հետ,
և բաժանված եմ հազարավոր կտորների:
Ո՛չ, այդ իմ մահվան ժամը չէ՛,
դեռ պարանոցս մերկացված չէ դահճի առաջ:

□□□□□□□□□□
Աստվածները քայլում են մեր աշխարհով՝
գարշանքով բարձրացնելով փեշերն իրենց:
Կատուների քայքայվող դիակների կողքով,

տրորված որդերի կողքով,
նրանք անցնում են իրենց սանդալներով՝
խոնավ՝ ժամանակի թքից:
Նրանք արդեն չեն ապրում երկինքներում՝
տանջանքներից գահավիժած մեղավոր երկրի,
նրանք քայլում են՝ տանջված ծանր երազից
և ճահճային տիղմից,
կանգ են առնում,
հաշվում են իրենց մեռելներին,
շներին՝ դուրս գցած լեզուներով,
և զգուշորեն ու ազահաբար
նայում են դեպի անդունդը,
ու կրվում են առնետները միմյանց հետ՝
դրոշակների պատառների համար:

After such pleasures

Այս գիշեր ես քո շուրթերն էի փնտրում ուրիշ
շուրթերի մեջ
և համարյա հավատացի, որ գտել եմ քեզ,
չէ՛ որ ես՝ կույրս, գիտեմ՝ ինձ կնոջ մեջ ձգում է գետը:
Բայց ինչպիսի ծանծրույթ. հասնել ավին երազի
և հասկանալ՝ հաճույքը՝ ստրուկ է խղճուկ՝
կեղծ մանրադրամ ստացած:
Մոռացվա՛ծ, սիրելի՛, ինչպես կուզեի ես,
հարություն տալ տանջանքին այն,այն հույսին անհույս՝
Բուենոս Այրեսում:
Եթե կրկին սիրեի քեզ
նավահանգստի կողմը նայող իմ տանը,
եթե կրկին հանդիպեի քեզ առավոտյան
սրճարանում,
և եթե ոչի՛նչ, ոչի՛նչ
դեռ պատահած չլիներ
և անհրաժեշտ չլիներ ոչինչ մոռանալ,
և ձեռքերը քո՝ չջնջել հիշողությունից...
թող մի բան մնա միայն՝ պատուհանը՝ դեպի
անասող երկինք:

Happy New Year

Արդյոք շա՛տ բան եմ խնդրում.
Ես կուզեի, որ քո ձեռքը՝
որպես փոքրիկ գորտ, քներ իմ ավերի մեջ:
Ի՛նչ է ինձ հարկավոր: - Այս դուռը բացել,

քո աշխարհը մտնել,
փակ, կանաչ և քաղցր աշխարհը:
Այս գիշեր, երբ վերջանում է բուրի միայնության տարին,
չե՛ս տա ինձ ձեռքդ.

Դու՛ հեռու ես...

Ես օդից կստեղծեմ քո ամեն մի մատը
և նուրբ միջուկը քո ափի,
կստեղծեմ հակառակ կողմը՝
երակների հյուսվածքով երկնագույն ծառերի աշխարհը:
Կարծես թե ինձնից է կախված
գոյությունը աշխարհի,
հաջորդականությունը տարվա եղանակների,
կանչը աքաղաղի, սերը մարդկային:
Իմ ափերի մեջ եմ
ես վերցնում քո ձեռքը...

ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ

(Ժամանակակից բանաստեղծություն)

Այն ամենը, ինչ քո մեջ պետք է սիրեի,
իրականում, այնքան քի՛չ է,
իրականում՝ ողջը հենց այդ է:

Մոտակայքում թափառող շունը, բլուրը, ափը գետի,
տաղտուկը ամենօրյա, ամեն տեսակ դատարկ բաները,
վարսերը՝ ցորենի ոսկով ծփացող,
բույրը քո մարմնի, որ ինձ հետ է ամենուր,
օրվա ընթացքում ասած քո խոսքերը՝
իմ դեմ և իմ օգտին:

Այդ ամենը այնքան քիչ է,
բայց չէ՛ որ ես սիրում եմ այդ ամենը,
քանի որ սիրում եմ քեզ:
Թող որ նայես ու չնկատես ինձ,
թող որ գիշերը ինձ սիրես՝
ատելով առավոտյան,
թող որ դու ճչաս՝ տրվելով ինձ,
և քո ճիչը լսեն փողոցում.
և թող հաճույքները, որոնց կտրվենք մենք,
դառնան նշանը մեր ազատության:

ՈՐՈՇՈՒՄ

Սերը խխունջ է. նրանում մնում եմ
հիշողությունները, կերպարները ու ձայները.

Նրանք առավել իրական են՝ անջատումի մեջ,
ծովից հեռու՝ առավել լսելի է աղմուկը ծովի:
Աշնան օրերի ցրտից՝
կտրատում է ցավով տերև- ձեռքերն իր ծաղիկը,
և արթնանում է ուրախության ու ցավի մեջ,
արևի տակ՝ իր ամեն մի բջիջով:
Հրաշագեղ արձանը միայնակ է,
մշտապես միայնակ և երբեք՝ տրտմության մեջ.
(հպարտ եղի՛ր դու, բայց մի՛ հակաճառիր նրան),
քարից ու երազից է ստեղծված,
ոչնչից, բայց մինչ այժմ իսկական,
ճերմակ շուշանից ճերմակ է սերը: